Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 11 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | 2023 թվականի սեպտեմբերի 24-ից Լեռնային Ղարաբաղից տեղահանված 1245 շահառուի հումանիտար աջակցության ցուցաբերում՝ առաջնային կարիքները հոգալու համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Քուվեյթի Կարմիր մահիկի ընկերություն |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայկական Կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ՝ 00006023) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն<br>Բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 31,334,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | 2023 թվականի սեպտեմբերի 24-ից Լեռնային Ղարաբաղից տեղահանված 1245 շահառու: Ծրագրի թիրախ խումբը վերջնական ձևավորվելու է պատկան լիազոր մարմինների և տեղական իշխանությունների աշխատակազմերի հետ համագործակցության արդյունքում: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2023 թվականի դեկտեմբերի 28-ից մինչև 2024 թվականի փետրվարի 29-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1) սննդային պարագաների ձեռքբերում և տրամադրում՝ 4,473,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 28-ից մինչև 2024 թվականի փետրվարի 29-ն ընկած ժամանակահատվածում. |

| | | |
|---|---|---|
| | | 2) հիգիենիկ պարագաների ձեռքբերում և տրամադրում՝ 12,033,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 28-ից մինչև 2024 թվականի փետրվարի 29-ն ընկած ժամանակահատվածում.<br>3) անկողնային պարագաների ձեռքբերում և տրամադրում՝ 12,450,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 28-ից մինչև 2024 թվականի փետրվարի 29-ն ընկած ժամանակահատվածում.<br>4) արկղերի ձեռքբերում՝ 378,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 28-ից մինչև 2024 թվականի փետրվարի 29-ն ընկած ժամանակահատվածում.<br>5) ընկերության տեսանելիությունը ապահովելու համար լոգոների տպագրություն՝ 500,000 դրամ, 2023 թվականի դեկտեմբերի 28-ից մինչև 2024 թվականի փետրվարի 29-ն ընկած ժամանակահատվածում.<br>6) տրանսպորտային ծառայությունների ձեռքբերում բաշխումն իրականացնելու համար՝ 1,500,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի դեկտեմբերի 28-ից մինչև 2024 թվականի փետրվարի 29-ն ընկած ժամանակահատվածում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1) սննդային պարագաների ձեռքբերում և տրամադրում՝ 4,473,000 դրամ արժողությամբ.<br>2) հիգիենիկ պարագաների ձեռքբերում և տրամադրում՝ 12,033,000 դրամ արժողությամբ.<br>3) անկողնային պարագաների ձեռքբերում և տրամադրում՝ 12,450,000 դրամ արժողությամբ.<br>4) արկղերի ձեռքբերում՝ 378,000 դրամ արժողությամբ.<br>5) ընկերության տեսանելիությունը ապահովելու համար լոգոների տպագրություն՝ 500,000 դրամ արժողությամբ.<br>6) տրանսպորտային ծառայությունների ձեռքբերում բաշխումն իրականացնելու համար՝ 1,500,000 դրամ: |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր՝ 500,000 դրամ արժողությամբ, որը ներառում է ընկերության տեսանելիությունը ապահովելու համար լոգոների տպագրություն՝ 500,000 դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Լոռու, Տավուշի, Սյունիքի, Վայոց ձորի, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Շիրակի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզպետների աշխատակազմերի և համայնքապետարանների հետ սերտ համագործակցությամբ, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի և վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմերի հետ սերտ համագործակցությամբ: Հայկական Կարմիր խաչի ընկերությունը համագործակցում է նաև Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեն իրականացնելու է գործունեության անմիջական վերահսկումը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

09.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ